ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

**Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ**

**20.03.2020Թ.**

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 11 անդամները:

Բացակայում են Գասպարյան Մելիք, Խլղաթյան Արսեն, Վարդանյան Նորայր, Վարդանյան Սարգիս:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
***Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ս.Բալաբեկյանը, Գ.Աֆյանը և գյուղերի վարչական ղեկավարները:***
***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան***

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
2. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
3. Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին
4. Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեի տարեկան եկամուտների և ծախսերի հաշվետվության մասին:
5. Չարենցավան համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2019 թվականի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման մասին:
6. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները ուղղակի վաճառքի եղանակով և աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին;
7. Համայնքապետարանի դահլիճի վերանորոգման ծրագրի համաֆինանսավորման մասին:
8. Քաղաքային զբոսայգու վարձակալության պայմանագրի դրույթների իրականացման և գործառնական համապատասխանության գնահատման հանձնաժողով ստեղծելու մասին:
9. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը աճուրդային եղանակով օտարելու թույլտվություն տալու մասին:
10. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը աճուրդային եղանակով օտարելու թույլտվություն տալու մասին:
11. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը աճուրդային եղանակով օտարելու թույլտվություն տալու մասին:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան***

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

**Կողմ- 10 դեմ - 1 ձեռնպահ -0**

***Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

1. **Զարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:**

***Զեկուցող՝ Գ. Աֆյան***

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝***առաջարկում եմ***.

1. Զարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի «Զարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 69-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

***1) Հաստատված բյուջեի վարչական մասի՝***

ա. 7421 «Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ» հոդվածի «5396.75» թիվը փոխարինել «5474.3» թվով,

բ. 7422 «Վարչական գանձումներ»-ի «Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ» հոդվածի «36000,0» թիվը փոխարինել «36310,0» թվով,

***2) Հաստատված բյուջեի ֆոնդային մասի՝***

ա. 7332 «Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)» հոդվածին հատկացնել 28869,362 հազ. դրամ,

ա. 8411 «Հողի իրացումից մուտքեր» հոդվածի «30843.0» թիվը փոխարինել «43406.0» թվով,

***3) Համայնքի բյուջեի ծախսերի վարչական մասում կատարել հետևյալ փոփոխությունները.***

ա. 0133 ՔԿԱԳ պատվիրակված լիազորությունների 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» սինթետիկ հաշվի «5076.75» թիվը փոխարինել «5154.3» թվով,

բ. 0451 «Ճանապարհային տրանսպորտ» - ի 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» սինթետիկ հաշվի «3700.0» թիվը փոխարինել «4010.0» թվով:

***4) Համայնքի բյուջեի ծախսերի ֆոնդային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.***

ա. 01-1-1 «Համայնքապետարանի պահպանման ծախսեր» - ի 5122 «Վարչական սարքավորումներ» սինթետիկ հաշվին հատկացնել 260.0 հազ. դրամ,

բ. 0161 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» - ի՝

բա. 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» սինթետիկ հաշվին հատկացնել 7303.0 հազ. դրամ,

բբ. 5129 «Մոնտաժվող սարքավորումներ» սինթետիկ հաշվին հատկացնել 5000.0 հազ. դրամ,

գ. 0451 «Ճանապարհային տրանսպորտ» - ի 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» սինթետիկ հաշվին հատկացնել 28869,362 հազ. դրամ:

**2.** Թույլատրել գնումները կատարել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի համաձայն:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-9** **դեմ - 1** **ձեռնպահ -1**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***2. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին***

***/Զեկուցող՝ Գ. Աֆյան/***

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի Սուրբ Փրկիչ եկեղեցու հոգևոր հովիվ ***Տեր Իսահակ քահանա Մարգարյանի*** 2020 թվականի հունվարի 22-ի թիվ 216-16 դիմումը ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝***առաջարկում եմ*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել ***Տեր Իսահակ քահանա Մարգարյանին;***

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-10** **դեմ - 1** **ձեռնպահ -0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

3. ***Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:***

***/Զեկուցող՝ Գ. Աֆյան/***

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով՝ ***առաջարկում եմ.***

1. ***Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 25000.0 հազ. դրամ գումար հատկացնել՝***

***1) Համայնքի բյուջեի ծախսերի վարչական մասում կատարել հետևյալ փոփոխությունները.***

ա. 0451 «Ճանապարհային տրանսպորտ»-ի 4251 «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» սինթետիկ հաշվի «4010.0» թիվը փոխարինել «29010.0» թվով:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-10** **դեմ - 1** **ձեռնպահ 0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

4. ***Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեի տարեկան եկամուտների և ծախսերի հաշվետվության մասին:***

***/Զեկուցող՝ Գ. Աֆյան/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի,***առաջարկում եմ***.հաստատել Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեի տարեկան եկամուտների և ծախսերի մասին համայնքի ղեկավարի հաշվետվությունը (ներկայացվում է):

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-9** **դեմ - 1** **ձեռնպահ -1**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***5. Չարենցավան համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2019 թվականի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման մասին:***

***Զեկ. /Ս.Բալաբեկյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին¦ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և 82-րդ հոդվածի 7-րդ կետով.***առաջարկում եմ*** հաստատել Չարենցավան համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2019 թվականի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ համաձայն հավելվածի /ներկայացվում է/:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-10 դեմ - 1 ձեռնպահ -0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***6 Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և մրցույթային կարգով վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:***

***Զեկ. /Բ.Բալբաբյան/***

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 46-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով,***առաջարկում եմ*** թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և մրցույթային կարգով վարձակալությամբ տրամադրելու ՝ համաձայն հավելվածի:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-8 դեմ - 1 ձեռնպահ -2**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

7. ***Համայնքապետարանի դահլիճի վերանորոգման ծրագրի համաֆինանսավորման մասին:***

***Զեկ /Ա.Ծերունյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի 42-րդ կետով.***առաջարկում եմ.*** տալ համաձայնություն՝ Եվրոպայի խորհրդի կողմից, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ ու Ավստրիական զարգացման համագործակցության գրասենյակի ֆինանսավորմամբ իրականացվող՝ Հայաստանի խոշորացված համայնքների համար լավագույն գործելակերպի ծրագրի «Համայնքային տարածքի վերանորոգում կամ բարելավում» անվանակարգում Չարենցավանի համայնքապետարանի դահլիճի վերանորոգման և որպես հանրային հարթակի գործարկման դրամաշնորհային ենթածրագրի ընդհանուր 13 215 000 ՀՀ դրամ բյուջեի 52%-ի՝ 6 915 000 ՀՀ դրամ, որպես համայնքային ներդրում հատկացնելու:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ - 10** **դեմ - 1** **ձեռնպահ -0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

8. ***Քաղաքային զբոսայգու վարձակալության պայմանագրի դրույթների իրականացման և գործառնական համապատասխանության գնահատման հանձնաժողով ստեղծելու մասին:***

***/Ս.Մուրադյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ կետով, քաղաքային զբոսայգու վարձակալության պայմանագրի դրույթների իրականացման և գործառնական համապատասխանության գնահատման նպատակով.***առաջարկում եմ.*** Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝- | Ա.Գասպարյան- | համայնքի ավագանու անդամ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ն.Վարդանյան- | համայնքի ավագանու անդամ |
| | Ս. Վարդանյան- | համայնքի ավագանու անդամ |
| | Հ.Գրիգորյան- | համայնքի ավագանու անդամ |
| | Մ.Պողոսյան- | համայնքի ավագանու անդամ |
| | Գ.Երիցյան- | համայնքի ավագանու անդամ |
| | Ն.Բաբայան- | համայնքի ավագանու անդամ |
| | Գ.Բեգլարյան- | Չարենցավանի ԵՈՒՀԿ –ի նախագահ |
| | Բ. Բալբաբյան- | քաղաքաշին, ճարտ.,գյուղատնտ., բնակ.տնտ. բաժնի պետ |
| | Վ.Մակինյան - | համայնքի բնակիչ |

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ - 10** **դեմ - 1** **ձեռնպահ -0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***9.Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը աճուրդային եղանակով օտարելու թույլտվություն տալու մասին:***

***Զեկ. /Բ. Բալբաբյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով «ԷՍ ՅԻ ԷՄ ԳՐԱՆԴ» ՍՊԸ-ի գնահատման հաշվետվությունը ՝ ***առաջարկում եմ.*** թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը՝ Չարենցավան համայնք, գ.Ալափարս 22-րդ փողոց թիվ 26 հասցեում գտնվող 335.03 քմ ընդհանուր մակերեսով շինությունները և նրանով զբաղեցրած 0.1686 հա մակերեսով հողատարածքը աճուրդային եղանակով օտարելու համար:
Շինությունների և հողատարածքի մեկնարկային գինը սահմանել 18 850 000 (տասնութ միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ - 10** **դեմ - 1** **ձեռնպահ -0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***10.Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը աճուրդային եղանակով օտարելու թույլտվություն տալու մասին:***

***Զեկ. /Բ. Բալբաբյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով «ԷՍ ՅԻ ԷՄ ԳՐԱՆԴ» ՍՊԸ-ի գնահատման հաշվետվությունը ՝ ***առաջարկում*** *եմ* թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը՝ Չարենցավան համայնք, գ.Բջնի 10-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 2 հասցեում գտնվող 1404.72 քմ ընդհանուր մակերեսով շինությունը և նրանով զբաղեցրած 0.3859 հա մակերեսով հողատարածքը աճուրդային եղանակով օտարելու համար:
Շինության և հողատարածքի մեկնարկային գինը սահմանել 21 520 000 (քսան մեկ միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ - 10** **դեմ - 1** **ձեռնպահ -0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

*Լսեցին.*

***11. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը աճուրդային եղանակով օտարելու թույլտվություն տալու մասին:***

***Զեկ. /Վ.Չիլինգարյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով «ԷՍ ՅԻ ԷՄ ԳՐԱՆԴ» ՍՊԸ-ի գնահատման հաշվետվությունը ***՝առաջարկում*** եմ թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ ԳԱԶ 3110 մակնիշի /2003 թվականի արտադրության/ ավտոմեքենան աճուրդային եղանակով օտարելու համար:
Ավտոմեքենայի մեկնարկային գինը սահմանել 465 000 (չորս հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-10** **դեմ-1** **ձեռնպահ-0**

**Բաբայան Նարեկ** **Վարդանյան Նորիկ**

**Բաբայան Վալերի**

**Գասպարյան Անատոլի**

**Գրիգորյան Հակոբ**

**Դավթյան Կարեն**

**Երիցյան Գագիկ**

**Եփրեմյան Տարոն**

**Սահակյան Երեմ**

**Պողոսյան Մնացական**

**Փանոսյան Արթուր**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

**Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան** _____

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ.Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**